Հայ գրականության օլիմպիադայի
հանրապետական փուլի հարցաշարեր
XI դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

1. Վահան Տերյանի մուտքը։ «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն. թեմատիկան. անդարձ սիրո և կարոտի աղոթքը (վերլուծել 2-3 բանաստեղծություն՝ հեղինակային հղումներով)։ Տերյանին նվիրված չարենցյան շարքը։ 5 մ.

2. Չարենցը՝ հեղափոխական և նորարար։ «Սոմա», «Ամբոխները խելագարված»։ Ի՞նչն էր Չարենցի հիասթափության պատճառը։ 5 մ.

3. Հեթանոսության «վերադարձը» և փառաբանումը։ XX դարասկիզբ : Ո՞վ է գրական ֆիդային։ Ի՞նչ ստեղծագործություն է նվիրել հեթանոսությանը։ Ներկայացնել հեղինակային համապատասխան հղումը։ 5 մ.

4.Իմ Թումանյանը։ Թումանյանի լեգենդներն ու բալլադները («Ախթամար», «Լուսավորչի կանթեղը», «Փարվանա», «Մի կաթիլ մեղրը», «Աղավնու վանքը»)՝ աշակերտի ընտրությամբ՝ առնվազն երկու գործ։ 5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան